# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր [illegible] (094)
248414 , goghadir.kotayq@mta.gov.am

N 15
*14 հունվար 2021թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավարի N74-Ա, N1-Ա, N2-Ա, N3-Ա, N4-Ա, N5-Ա, N6-Ա, N7-Ա և N8-Ա որոշումները:

Առդիր 16 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. [illegible]*

*093855397*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2020թվականի N 74-Ա

### <<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղադիր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N35-Ա որոշումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 11-րդ կետի դրույթներով, որոշում եմ.

1.<<Գեաղադիր համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Մարինե Հովակիմի Գրիգորյանին ազատել աշխատանքից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 30
գ.Գեղադիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 1-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝ որոշում եմ.

1.Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակել Մարինե Հովակիմի Գրիգորյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հունվարի 08
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, goghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021 թվականի N 2-Ա

### 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝ որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի վարչական տարածքում գտնվող անասնագլխաքանակի համատարած հաշվառում անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.
1)Սարգսյան Հրայր համայնքի ղեկավար - հանձնաժողովի նախագահ
2)Թադևոսյան Շողիկ 1-ին կարգի մասնագետ- հանձնաժողովի անդամ
3)Գասպարյան Գևորգ համայնքի ավագանու անդամ - հանձնաժողովի անդամ
2.Հանձնաժողովին ՝սահմանված կարգով և ժամկետում անցկացնել համայնքի բնակչության տնտեսություններում անասնագլխաքանակի հաշվառումը և ներկայացնել հաշվետվություն:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հունվարի 08
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 3-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝որոշում եմ,

1.Գեղադիրի համայնքապետարանի աշխատանքները կազմակերպելու համար՝ 2021 թվականի համար անհատույց վարձակալել համայնքի ղեկավար Հրայա Սարգսյանի սեփական <<Միցուբիշի>>մարդատար 13 US 404 մակնիշի ավտոմեքենան:
2.Տարվա ընթացքում կատարել մեքենայի պահպանման ծախսերը ,ապահովելով վառելանյութով:
3.Հրայա Սարգսյանի հետ կնքել տարնսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ.հունվարի08
գ.Գեղադիր

# ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1

## (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ)

գ. Գեղադիր «08» Հունվարի 2021թ.

ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիրի համայնքապետարանը այսուհետ` <<Վարձակալ>>, ի դեմս Հրաչյա Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա մի կողմից, և ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի բնակիչ, այսուհետ`«Վարձատու», ի դեմս Հրաչյա Սարգսյան /ն/բ 000232876 019 07.11.2012թ/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

### 1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով` Վարձատուն վճարի դիմաց 1.2 կետում նշված ավտոմեքենան, այսուհետ` «Տրանսպորտային միջոց», հանձնում է Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը ու իր ուժերով ծառայություններ է մատուցում դրա կառավարման և տեխնիկական շահագործման համար:

1.2. Տրանսպորտային միջոցի բնութագիրը`

ա) ավտոմեքենայի մակնիշը` MITCUBISHI

բ) Տիպարը PAJERO

գ ) պետ համարանիշը 13 US 404

դ ) թողարկման տարեթիվը` 2007թ.

ե ) թափքի տեսակը ունիվերսալ

զ ) գույնը` սև

է ) Նույնականացման համարը JMYLRV93W8J712070

1.3. Տրանսպորտային միջոցը Վարձատուին է պատկանում սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով` տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր:

1.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում` վարձակալած Տրանսպորտային միջոցի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5. Վարձատուն երաշխավորում է, որ Տրանսպորտային միջոցը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5. Վարձակալության հանձնված Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի` հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

1.6. Անձնակազմի անդամները Վարձատուի աշխատողներն են: Նրանք ենթարկվում են Վարձատուի` տրանսպորտային միջոցի վարմանը և տեխնիկական սպասարկմանը, ինչպես նաև Վարձակալի` Տրանսպորտային միջոցի առևտրային շահագործմանը վերաբերող կարգադրություններին, որոնք պետք է լինեն օրինաչափ և ողջամիտ.

1.7. Տրանսպորտային միջոցը ժամանում է առավոտյան ժամը $9^{00}$ -ին 4-րդ փողոց թիվ 4 հասցեով և գտնվում է Վարձակալի տրամադրության տակ մինչև ժամը $18^{00}$-ը:

1.8. Տրանսպորտային միջոցի պահպանության և վերանորոգման բոլոր ծախսերը կատարում է Վարձատուն` բացառությամբ այն դեպքի, երբ ավտոմեքենայի վնասվածքը կամ անսարքությունն առաջացել է Վարձակալի մեղքով:

### *2. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

2.1. Վարձատուն իրավունք ունի`

2.1.1. Վարձակալից պահանջել Տրանսպորտային միջոցն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների նական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.3. Երբ Վարձակալը Տրանսպորտային միջոցից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2. Վարձատուն պարտավոր է`

2.2.1. ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, առավոտյան ժամը $9^{00}$-ին, վարձակալին տրամադրել Տրանսպորտային միջոցը հետևալ հասցեով. 4-րդ փողոց թիվ 4:

2.2.2. սույն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում վարձակալության հանձնված Տրանսպորտային միջոցը պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ` ընթացիկ և հիմնական վերանորոգում իրականացնելը և անհրաժեշտ պահեստամասեր տրամադրելը.

2.2.3. Տրանսպորտային միջոցի տեխնիկական անսարքության դեպքում, որը չի կարող վերացվել տեղում` վարորդի ուժերով, 2 (երկու) ժամվա ընթացքում փոխարինել համապատասխան մակնիշի այլ Տրանսպորտային միջոցով: Այդ դեպքում 1.8. կետում նշված` վարորդի աշխատանքային ժամի ավարտը և Տրանսպորտային միջոցի վերադարձի ժամը համաչափորեն փոխվում են.

2.2.4. մատուցել Տրանսպորտային միջոցի վարման և տեխնիկական շահագործման ծառայություններ: Մատուցված ծառայությունները պետք է ապահովեն Տրանսպորտային միջոցի բնականոն և անվտանգ շահագործումը: Վարձատուն ինքնուրույն է որոշում այն անձանց, ովքեր վարում են Տրանսպորտային միջոցը, ինչպես նաև իրականացնում են դրա տեխնիկական շահագործումը:

Վարձատուն պարտավոր է այդ նպատակների համար տրամադրել անձանց, ովքեր ունեն անհրաժեշտ որակավորում, համապատասխանում են տվյալ տեսակի Տրանսպորտային միջոցի շահագործման պարտադիր պահանջներին և պայմանագրի պայմաններին.

2.2.5. սույն պայմանագրի կնքման պահից 1 օրվա ընթացքում ապահովագրել Տրանսպորտային միջոցը, ինչպես նաև դրա շահագործման հետ կապված հնարավոր վնասի համար պատասխանատվության ռիսկը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Վարձատուից պահանջել սույն պայմանագրի 1.7. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրելու Տրանսպորտային միջոցը.

2.3.2. պահանջել Վարձատուից իրեն տրամադրելու Տրանսպորտային միջոցի պատկանելիքները և փաստաթղթերը.

2.3.3. Տրանսպորտային միջոցի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու Տրանսպորտային միջոցի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Տրանսպորտային միջոցի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3. պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.

2.3.4. պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Տրանսպորտային միջոցի վիճակը վատթարացել է.

2.3.5. Վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.

2.3.5.2. պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. վարձավճարը Վարձատուին վճարել ժամանակին՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայմաններով.

2.4.2. կատարել Տրանսպորտային միջոցի ընթացիկ շահագործման հետ կապված ծախսերը, ներառյալ՝ վառելիքի և շահագործման ընթացքում օգտագործվող այլ նյութերի համար ծախսերը և գանձումների վճարը:

2.5. Վարձակալն իրավունք չունի, առանց Վարձատուի համաձայնության, Տրանսպորտային միջոցը հանձնել ենթավարձակալության.

2.6. Վարձակալը Տրանսպորտային միջոցի ընթացիկ շահագործման շրջանակներում իրավունք ունի, առանց Վարձատուի համաձայնության, իր անունից երրորդ անձանց հետ կնքել փոխադրումների և այլ պայմանագրեր, եթե դրանք չեն հակասում Տրանսպորտային միջոցի օգտագործման՝ սույն վարձակալության պայմանագրում նշված նպատակներին և դրա նշանակությանը:

### 3. Հաշվարկների կարգը

3.1. Վարձավճարի ամսական չափը, կազմում է 25000 դրամ,որից 2500(երկու հազար հինգ հարյուր) դրամը փոխանցվում է եկամտահարկ,իսկ 22500(քսաներկու հազար ) դրամը փոխանցվում է վարձատուի հաշվեհամարին:

3.2. Նշված վճարը Վարձակալը վճարում է յուրաքանչյուր ամսվա 5-ից ոչ ուշ համայնքի բյուջեից փոխանցումով:

3.3. Կողմերի միջև վերջնական հաշվարկները կատարվում են յուրաքանչյուր ամիսն ավարտվելուց հետո:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Տրանսպորտային միջոցի ոչնչացման կամ վնասման դեպքում Վարձակալը պարտավոր է հատուցել Վարձատուին հասցրած վնասները, եթե վերջինս ապացուցում է, որ Տրանսպորտային միջոցի ոչնչացումը կամ վնասվածքը տեղի են ունեցել այնպիսի հանգամանքներում, որոնց համար Վարձակալը պատասխանատու է օրենքին կամ վարձակալության պայմանագրին համապատասխան:

4.2. Տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով, համակարգերով՝ երրորդ անձանց պատճառած վնասի համար պատասխանատվությունը, կրում է Վարձատուն՝ օրենքով սահմանված կարգով:

4.3. Տրանսպորտային միջոցը 2 (երկու) ժամից ավելի չտրամադրելու դեպքում Վարձատուն ուշացման յուրաքանչյուր ժամի համար Վարձակալին վճարում է տուգանք՝-----------(-------------) դրամի չափով՝ հաշվարկը կատարելով ժամը ---
-- ից մինչև Տրանսպորտային՝
(թվերով և տառերով)
միջոցի փաստացի ժամանման պահը, և Վարձակալին հատուցում է բոլոր այն ծախսերը, որոնք կապված են սույն պայմանագիրը չկատարելու հետ, այդ թվում՝ նաև բաց թողնված օգուտը:

4.4. Վարձավճարի մուծումների կետանցի դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա գումարի ------------------------ տոկոսի չափով:

### 5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

### 6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Տրանսպորտային միջոցն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
6.1.2. էականորեն վատթարացրել է Տրանսպորտային միջոցի վիճակը.
6.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:
6.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե`
6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտներ է ստեղծել Տրանսպորտային միջոցը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.
6.2.2. Վարձակալին հանձնված Տրանսպորտային միջոցն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, Տրանսպորտային միջոցը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս.
6.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Տրանսպորտային միջոցը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանա-տվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը

8.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է «08» Հունվարի 2021 թ. -ից մինչև <<30>> դեկտեմբերի 2021 թ.:
8.2. Սահմանված ժամկետն ավարտվելուց հետո պայմանագիրը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

9. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

Վարձատու
ՀՀ Կոտայքի մարզ գ. Հացավան
4-րդ փ.թիվ 4
ՀՀ ֆին.նախ. գործ.վարչություն
Հ/Հ 900102258036
Համայնքի ղեկավար Հրաչյա Սարգսյան
______________________________
(ստորագրություն)

Վարձակալ
ՀՀ Կոտայքի մարզ գ. Գեղաշեն
3փ.թիվ 2
Ակբա Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ
Հ/Հ 220112650027745
Համայնքի բյուջե Հրաչյա Սարգսյան
______________________________
(ստորագրություն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 հունվարի 2021թվականի N 4-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հերմինե Սարգսյանի հայտը՝ որոշում եմ.

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հերմինե Սարգսյանին 2021 թվականի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Գեղադիր համայնքի 1-ին փողոցի թիվ 26 հասցեում /Թույլտվությունը կցվում է/:
2.Տեղեկացնել <<Հերմինե Սարգսյան>> ԱՁ-ին թույլտվությունը կտրամադրվի սահմանված տեղական տուրքը վճարելուց հետո:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Սարգսյանի վրա:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021 թ. հունվարի 08
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***08 հունվար 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***1. Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն***
***2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***ՀԵՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՁ, Գեղադիր 1-ին փողոց 26, ՀՎՀՀ՝ 43071918:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
***Գեղադիր 1-ին փ. թիվ 26,***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***08 հունվար 2021-ից*** մինչև ***31 դեկտեմբեր 2021-ը:***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 5-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Էռնեստ Մկրտչյանի հայտը՝ որոշում եմ.

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Էռնեստ Մկրտչյանին 2021 թվականի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Գեղադիր համայնքի 1-ին փողոցի12/1hասցեում/ Թույլտվությունը կցվում է/
2.Տեղեկացնել <<Էռնեստ Մկրտչյան>> ԱՁ-ին `թույլտվությունը կտրամադրվի սահմանված տեղական տուրքը վճարելուց հետո:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Սարգսյանի վրա:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ.հունվարի08
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ *08 հունվար 2021թ.*

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
*1. Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն*
*2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն*
Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը,
կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ
ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի
հաշվառման համարը՝
*ԷՌՆԵՍՏ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՁ, Կոտայքի մ. գ. Գեղադիր 5-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 6, ՀՎՀՀ՝ 43084831:*

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
*Գեղադիր 1-ին փողոց 12/1,*

Շինության տեսակը՝
*Հիմնական շինություն:*

Թույլտվության գործողության ժամկետը՝
*08 հունվար 2021-ից* մինչև *31 դեկտեմբեր 2021-ը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, goghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 6-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման ,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Խորեն Գասպարյանի հայտը՝ որոշում եմ.

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Խորեն Գասպարյանին 2021 թվականի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Գեղադիր համայնքի 2-րդ թաղամասի թիվ 1 հասցեում/ թույլտվությունը կցվում է/:
2.Տեղեկացնել <<Խորեն Գասպարյան>> Ա/Ձ-ին՝ թույլտվությունը կտրամադրվի սահմանված տեղական տուրքը վճարելուց հետո:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Ա.Սարգսյանի վրա:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հունվարի 08
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔ

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ *08 հունվար 2021թ.*

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***1.Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն***
***2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն***
Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***ԽՈՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՁ, Կոտայքի մ. գ. Գեղադիր 5-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 3, ՀՎՀՀ՝ 43057187:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
***Կոտայքի մարզ Գեղադիր 2-րդ թաղամաս թիվ 1,***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***08 հունվար 2021**-ից մինչև **31 դեկտեմբեր 2021**-ը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 7-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րգ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման,հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աիարոն Գրիգորյանի   հայտը,որոշում եմ.

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Աիարոն Գրիգորյանին 2021 թվականի ընթացքում զբաղվելու   ոգելից և ալկոհոլային   խմիչքների և ծխախոտի արտադրանքի   վաճառքով Գեղադիր համայնքի   1-ին փողոցի թիվ 21 հասցեում /Թույլտվությունը կցվում է/:
2.Տեղեկացնել <<Աիարոն Գրիգորյան>>ԱՁ-ին՝թույլտվությունը կտրամադրվի   սահմանված տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի   առաջատար մասնագետ Ա.Սարգսյանի վրա:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2021թ. հունվարի 08
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***08 հունվար 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***1. Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն***
***2.Ծխախոտի արտադրաքի վաճառքի թույլտվություն***
Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***ԱՀԱՐՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՁ, Գեղադիր 5-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 1, ՀՎՀՀ՝ 43086182:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝
***Գեղադիր 1-ին փողոց 1-ին փող 21,***

Շինության տեսակը՝
***Հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝
***08 հունվար 2021***-ից մինչև ***31 դեկտեմբեր 2021***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունվարի 2021թվականի N 8-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>օրենքի 37-րդ հոդվածի,<<Համայնքային ծառայության մասին >>օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N490-Ա որոշումը՝ որոշում եմ.

1.Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգսյան Հրաչյա-համայնքի ղեկավար,
հանձնաժողովի անդամներ՝ Ալեքսանյան Հարություն-մարզպետարանի ներկայացուցիչ
Սահակյան Սամվել- մարզպետարանի ներկայացուցիչ
Վարդանյան Արմեն մարզպետարանի ներկայացուցիչ
Մկրտչյան Հմայակ -համայնքի ավագանու անդամ
Հովհաննիսյան Արամ- համայնքի ավագանու անդամ
Գասպարյան Գևորգ - համայնքի ավագանու անդամ

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 28-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներ կազմավորելու և համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի N38-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N23-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ. հունվարի 08
գ.Գեղադիր